Գրանցված է
ՀՀ արդարադատության նախարարության կողմից
29 հունիսի 2016թ. Պետական գրանցման թիվ 60616233

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

17 հունիսի 2016թ. **N 39-Ն**
ք.Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԵՐԱՀՍԿԻՉ-ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 29-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ վերստուգիչ ծառայության (այսուհետ՝ վերահսկիչ վերստուգիչ ծառայություն) գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.Մուկուչյան**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2016թ. հունիսի 17-ի N 39-Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) իրականացնում է նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման, ինչպես նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն:

Ծառայությունը վերահսկողություն է իրականացնում նաև հանրաքվեի քարոզչության հիմնադրամներում կատարված մուծումների և դրանց օգտագործման նկատմամբ՝ «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան:

2. Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով, «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կարգով:

3. Ծառայությունը գործում է ընտրական հանձնաժողովներից անկախ և հաշվետու չէ նրանց: Ծառայությունն իր աշխատանքներն իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ համագործակցված:

4. Ծառայությունը գործում է մշտական հիմունքներով:

5. Ծառայությունը կարող է ունենալ ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

6. Ծառայությունը կազմված է ծառայության ղեկավարից և ծառայության երկու աշխատակիցներից: Ծառայության աշխատանքները ղեկավարում է ծառայության ղեկավարը, որը ներկայացնում է ծառայությունը:

7. Ծառայության ղեկավարի պաշտոնը քաղաքացիական պաշտոն է, ծառայության աշխատակիցների պաշտոնները քաղաքացիական ծառայության պաշտոններ են:

8. Ծառայության ղեկավարը նշանակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ յոթ տարի ժամկետով: Ծառայության ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

9. Ծառայության ղեկավարը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ, զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային

կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Հրապարակային ելույթներում պետք է ցուցաբերի քաղաքական զսպվածություն:

II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

10. Ծառայությունը.

1) վերահսկողություն է իրականացնում թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, դրանց հաշվարկման և ծախսերի նկատմամբ.

2) թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրը մեկ ստանում է համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ՝ թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ այն բանկերից, որտեղ նախընտրական հիմնադրամներ ձևավորելու համար բացվել են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ, դրանք ստանալուց հետո՝ 2 օրվա ընթացքում, ստուգման արդյունքներով կազմում է տեղեկանք և այն տեղադրում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում.

3) թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բայց որ ուշ քան ընտրության արդյունքերի ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ ստուգում, ստուգման արդյունքներով կազմում է եզրակացություն և ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով.

4) վերահսկողություն է իրականացնում կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ.

5) Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին և 115-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված դեպքերում՝ ընտրությունները նշանակելու իրավասություն ունեցող սուբյեկտի՝ ընտրություններ նշանակելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 10-օրյա ժամկետում, ընտրությունների կազմակերպմամբ և անցկացմամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված պարտականությունների վերաբերյալ իրազեկում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրած բանկերի ցանկում ընդգրկված այն առևտրային բանկերին, որոնցում

ընտրություններին մասնակցող թեկնածուները, կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) կարող են նախընտրական հիմնադրամ բացել:

III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Ծառայությունն իրավունք ունի՝

1) անհրաժեշտության դեպքում նախընտրական հիմնադրամներ ձևավորելու համար ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ բացած բանկերից ստանալ համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեներ՝ թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ.

2) անհրաժեշտության դեպքում համապատասխան բանկերից, կուսակցություններից և ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող այլ կազմակերպություններից ստանալ համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեներ՝ կուսակցությանը վճարված անդամակցության վճարների, կուսակցությանը կատարված նվիրատվությունների, բյուջետային ֆինանսավորման, քաղաքացիական իրավական գործարքներից ստացված դրամական միջոցների և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերի և ծախսերի վերաբերյալ.

3) անհրաժեշտության դեպքում թեկնածուներից ստանալ համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեներ նախընտրական հիմնադրամներից կատարված ծախսերի, կնքված քաղաքացիաիրավական գործարքների հիմնավորման վերաբերյալ.

4) իր գործունեությանն առընչվող հարցերի վերաբերյալ նախապատրաստել որոշումների նախագծեր և դրանք ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քննարկմանը.

5) մասնակցել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների անցկացման ֆինանսական ապահովման նպատակով ընդունվող իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման աշխատանքներին:

IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

12. Ծառայության գործունեության ֆինանսական և նյութատեխնիկական ապահովումը կատարվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի պահպանման համար պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին: